«Նկարներուս մէջ ես կը դնեմ իմ շունչս, զգացումներս ու տրամադրութիւնս եւ կ'ուզեմ, որ մարդիկ զգան այն անտեսանելի երեւոյթները, զորս ոչ մէկս կը տեսնեմ, բայց կը զգանք»:

ԽՈՒՆԻՆԻ

ՊԱՆԱՆՈՎ ՔԱՂՅՐԵՂԷՆ (ՌԱՅԼԱՆՏԵԱՆ ՍԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ)

- Բաղադրութիւն՝ 4 անձի համար.
- 4 պանան
- 100 կրամ փոշի շաքար
- 3 կանաչ կիտրոն
- 4 տոր մը կոճապղպեղ (gingerbeer) 4 սմ.
- 10 սանթիլիթր նարինջի հիւթ
- 20 կրամ կարագ
- 20 կրամ կարագ (կաղապարին յատակը ծեփելու համար)

Պատրաստութիւն.
Փուռը տաքցնել 180 ջերմաստիճանով:
Պանանները կեղուել եւ 1 կիտրոնի հիւթը վրան թափել, որպէսզի չսենան:



Մնացեալ 2 կիտրոնները քամել, կոճապղպեղը կեղուել եւ շատ մանր մանրել:
Կաթնայի մը մէջ շաքարը տաքցնել մէկ ապուրի դրակ կիտրոնի հիւթին հետ, եւ երբ քաջ գոյնի քարամէլ մը ստացուի, աւելցնել մնացեալ հիւթը, նաեւ նարինջի հիւթը եւ կափարիչով ծածկել:
Կափարիչը բանալ եւ տափակ դրակով մը խառնել, մինչեւ որ միատարր նիւթ մը ստացուի:

Աւելցնել մանրուած կոճապղպեղը, 2 վայրկեան թեթեւ կրակի վրայ եփել, ապա քամոցէ անցընել:
Պանանները շարել կարագով ծեփուած ամանի մը մէջ, երեսին թափել կոճապղպեղով քարամէլը, վրան տեղ - տեղ գետեղել կարագի պղտիկ կտորներ եւ 10 վայրկեան եփել փուռին մէջ: Հրամցնել գաղջ վիճակի մէջ:

ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆ ԱԵՆԱՐԵՆ

ՉԵՒԱԳԷՏ ՄՈՒՆԻՐԱ ՓԱՐԻԶԻ ՄԷՉ



Մագուսով թունուզցի 47 տարեկան Մունիրա Ահմէտ թաքթաքարդէն 20 տարիէ ի վեր Քուէյթ հաստատուած է, ուր ոսկեգօծ ժանեակներով, աղամանդեայ սաեղնագործերով եւ թանկագին պրորպարներով շրջուցած է քուէյթցի կիները:

Վերջերս Մունիրա Փարիզի մէջ ցուցադրած է հոք քուէթի իր վերջին հաւաքածոն եւ այդ առիթով խումբ մը լրագրողներու յայտարարած է, որ զժախտարար Արեւմուտքը Քուէյթի մասին լսած է Մոցի պատերազմին առիթով, բայց շատ քիչ բան դիտէ քուէյթցի կնոջ մասին: Մունիրա կ'աւելցնէ, թէ քուէյթցի կինը շատ նուրբ ճաշակի տէր եւ անհատականութիւն ունեցող կին է: Քուէյթցի կիներուն երեք քառորդը կ'ուսանի աշխարհի մեծագոյն համալսարաններուն մէջ, եւ թէ Քուէյթի գործատէրերուն 45 առ հարիւր կիներէ բաղկացած է: Փարիզի մէջ ցուցադրուած Մունիրայի հաւաքածոն



բաղկացած է գիշերային եւ հարսանեկան հագուստներէ, որոնք ճոխացուած են ոսկեթելերով եւ թանկարժէք քարերով:

Նշենք, որ Մունիրայի յղացած հագուստները 1,500 էն մինչեւ 30 հազար տոլար կ'արժեն: Ան 9 ամիս աշխատանքի լծած է իր դերձակուհիները Պրունէյի Սուլթանին մէկ ապսպրանքը իրագործելու եւ գմբուխով ու շափիւղայով սաեղնագործելու համար:

Ներկայիս Մունիրա կը պատրաստէ նոր հաւաքածոյ մը՝ «Պատերազմ եւ խաղաղութիւն» թեմայով: Ան Քուէյթի իշխանին քրոջ եւ խումբ մը գործատէրերու աջակցութեամբ որոշած է աշխարհը նուաճել եւ ինքզինք պարտադրել:

Պատրաստե՛ք ՇՈՒՇԻԿ ՍԱԻՒԱԳԱԼԵԱՆ

ԱՏԻԼ
ԱՏԻՏԻ ՇԷՆԲ. ՅԱՐԿ
ՆՈՒ. 01/242556-7

ՉԵՐ ԻՆՔՆԱՇԱՐԹԻՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՎԱՏԱՆԵՅԷՔ Ա Տ Ի Լ - Ի

ԿԱՐԾԻՔՆԵՐ ԱՄՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

- Ամուսնութիւնը երկար խօսակցութիւն է, որ կ'ընդհատուի վէճերով...

Ռ. ՍԹԻԵՆՍԵՆ

* *

- Պէտք է կարենալ իր կնոջ մէջ գտնել աշխարհի բոլոր կիները:

ՊԱԼՉԱԲ

* *

- Ամուսնական միութիւնը մարդկային հասարակութեան առաջին աստիճանն է:

ԿԻԿԵՐՈՆ

* *

- Ոչ մէկուն կը պարտադրուի ամուսնանալ, բայց իւրաքանչիւր մարդ պէտք է ենթարկուի ամուսնութեան օրէնքներուն, եթէ ան արդէն ամուսնացած է:

Ք. ՄԱՐՔՍ

* *

- Լաւ կնոջ հետ ամուսնութիւնը նաւահանգիստ մըն է՝ այնպիսի մէջ, իսկ վատին հետ՝ այնպիսի մէջ, որտեղ ամուսնացած է:

Չ. ՊԵՏՏՍԵՆ

* *

- Տղամարդոց մեծ մասը իրենց կիներէն կը պահանջեն այնպիսի արժէքներ, որոնց իրենք արժանի չեն:

Լ. ԹՈՒՍԹՈՅ

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՍՍՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԹԱՏՐՈՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԻՒՆ ՄԸ «ՄԱՍՐԱՀ ԹԷՆԷՅՆ»

Լիբանանն մշակութային ու յատկապես թատերական կենտրոնը հարստացրնող նոր նախաձեռնությունները մը լիբանանյան Գեղարուեստի Ակադեմիան սկսած է կայանկերպել թատերական էլիտներու շարք մը, որուն առաջին ներկայացումը տեղի ունեցաւ Երկուշաբթի,

14 Ապրիլին: Իրաքանչիւր շաբաթ անգամ մը՝ ամէն Երկուշաբթի օր Ակադեմիայի թատրոնի բաժանմունքին ուսանողներն ու սիրողական թատրոնի այլ դերասաններ հանդիսատեսին պիտի ներկայացնեն թատերական գործի մը էլիտը: «Մասրահ Թէնէյն» («Երկուշաբթիի թատրոնը») խնդրեալ այս ներկայա-

ցումներու շարքը հանդիսատեսներ ներգրաւելու համար տեղի կ'ունենայ առանց մուտքի վճարումներու:

«Մասրահ Թէնէյն» կը նպատակադրէ ժամանակի ընթացքին լիբանանյան թատրոնին տալ կատարողական բարձր եւ արհեստավարժ մակարկալ: Ծրագիրը նաեւ կը ձգտի աշխուժացնել լիբանանյան թատերական տկար կենտրոնը, զայն ձեռքբերելու վաճառականական նպատակներէ եւ մասնաւոր՝ թատրոնին ու հանդիսատեսին միջեւ հաստատել իսկական վստահութեան փոխյարաբերութիւն մը:

«Մասրահ Թէնէյն» իր դռները բաց պահած է ուսանողական տարբեր ոճի թատերական ներկայացումներու դիմաց: Նշենք, որ թատերական ներկայացումները տեղի կ'ունենան Երկուշաբթի օրերը իրիկուսն ժամը 8:30ին, Լիբանանյան Գեղարուեստի Ակադեմիայի մէջ:

ԱՅՍՕՐ



- Պարային ելոյթ «Լէ Բայէ Տը Տան» ժամը 20:30ին, «Մոննո» թատերասրահին մէջ, մինչեւ 29 Ապրիլ:
- Նկարչական ցուցահանդէս «Սըրվալը», Հայկագեան համալսարանին մէջ, մինչեւ 5 Մայիս:
- Նուագահանդէս Լիբանանի Ազգային Սինֆոնիքը նուագախումբի ելոյթ, ժամը 20:30ին, Սէն Ժոզեֆ եկեղեցւոյ մէջ:
- Թատրոն «Էլ Մահֆուգ», ժամը 20:30ին, «Ալ Մատին» թատերասրահին մէջ, մինչեւ 30 Ապրիլ:
- Նկարչական ցուցահանդէս Հանիպալ Սրուժի գործերը, «Ժամին Ռուպէյ» ցուցասրահին մէջ, մինչեւ 2 Մայիս:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս «Եօն մոնտ լիտիք», «Այտա Շերֆան» ցուցասրահին մէջ, մինչեւ 25 Ապրիլ:
- Երգախումբ եւ պարային թատրոն՝ Մանսուր Ռահպանի «Մուր Էլ Բաուաէֆ», ժամը 20:30ին «Քազիմո տի Լիպան»ի մէջ, մինչեւ 28 Ապրիլ:

ՕՐԵՐԵՒՈՅԹ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ 2003
ՊԷՅՐՈՒԹ ՄԱՍԱՐԱ ԱՄՊՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՑԵՐԵԿ՝ 27°C
ԳԻՇԵՐ՝ 21°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 51%



ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԼՄՈՒՄԶ
24 Ապրիլ 1953

ԹՐԻՓՈՒԹԻ ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

Մարտ 21 եւ 22ին շրջանի 0 գնութեան խաչի վարչութիւնը կազմակերպեց իր տարեկան ընթացքին լաւագոյն կերպով քաջալերութեցաւ ոչ միայն մեր ժողովուրդէն, այլ նաեւ՝ տեղացի հայրենակիցներէ: Մեր տիկիներուն եւ քոյրերուն կողմէ շինուած հագուստներ, գեղեցիկ հայկական ձեռագործներ գարդը կը կազմէին պարզիկ: Գնահատանքի շքանշանները տեւող աշխատութեամբ մը 0 գնութեան խաչի գործիքներով հանցեցին Գնման մեծ ձեռնարկը մը: Գնման մեծ ձեռնարկը մը պահով լի միութեան:

Պահարի բացումին պատրաստուած հարուստ սեղանները, որոնք ճաշի վաճառատան մը երեւոյթը կու տային պարզիկ, յաջորդ օր պարպուած էին գրեթէ:

Մեր ժողովուրդը գիտէ գնահատել արժանաւորները: Անկասկած որ 0 գնութեան խաչը ամենուրեք, ինչպէս հոս, կը վայելէ մեր հասարակութեան շքանշանը:

Չանագան խաղեր, անակնկալներ մեծապէս փայլ տուին պարզիկ: Ակումբին մէջ Մարտ 21ի երեկոյեան տեղի ունեցաւ խրատներ, որ տեւեց մինչեւ ուշ գիշեր: Նորաբաց «Նաւասարդ» ակումբին ընդարձակ սրահը նեղ կու գար պարփակելու համար հիւրերը, որոնք անհամբերութեամբ կ'սպասէին:

ԱՅՍՕՐ՝ 24 ԱՊՐԻԼԻՆ

- 1888 մահ մեծ վիպասան Բաքիի:
- 1915 թուրք ջարդարարներ կ'իրագործեն Հայկական Յեղասպանութիւնը:
- 1965 Հայ Դատի յուշագիր՝ ՄԱԿի եւ եւրոպական ազդեցիկ երկրներու ներկայացուցիչներուն: Յուշագիր մըն ալ՝ Թուրքիոյ նախագահ Կիւլսէլի:
- Ոգեկոչում Հայկական Յեղասպանութեան

ՍԱԿԱՐԱՆ

Պէտքերի սակարանին մէջ օտար դրամահոյներու փակման սակագիծերը հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	32,30 - 32,40 լ.ն.
Իրաքեան տինար	4850,00 - 4860,00 լ.ն.
Քուէթեան տինար	5015,00 - 5040,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահիլեան տինար	3985,00 - 4010,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրիամ	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէուտական ռիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	250,00 - 260,00 լ.ն.
Մնգիլական սթրլին	2385,00 - 2395,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1095,00 - 1100,00 լ.ն.
Թրքական լիրա	93,00 - 93,50 լ.ն.
Կիպրական փաուստ	2775,00 - 2800,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,45 - 12,55 լ.ն.
Ավիլիեան հապար ֆրանք	2,80 - 2,85 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1035,00 - 1040,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	929,00 - 934,00 լ.ն.
Եւրօ	1650,00 - 1660,00 լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	130,000 - 135,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	116,000 - 121,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	107,000 - 112,000 լ.ն.
Մեքսիկական փէսո	618,000 - 638,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	16,090,000 - 16,290,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	333,00 - 333,50 \$
Մէկ օնս արծաթ	4,58 - 4,60 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակար.

Եւրօ	1.0949 - 1.0954
Քանադական տոլար	1.4513 - 1.4523
Չուիցերիական ֆրանք	1.3752 - 1.3762
Ճափոնական եէն	120.36 - 120.40
Մէկ սթրլին	1.5821 - 1.5831
Մէկ դոլար	555 դրամ

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. 6շդում Գիճի Բ. 6շդում	
Ա. կարգ	4 4/8 4 3/8
Բ. կարգ	4 6/8 4 5/8

ԼՈՒՄԱՅՈՒՆ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատունը՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՆԵԻ ԵՐԵՎԱՆԻ ՇՈՒՄԸ 5:00:

ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունին մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

- ★ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)
- Պիտի ազդուիք ձեր ընտանիքին մէկ անդամին մասին ձեր շուրջը ստեղծուած իրադարձութեան: Շնորհիւ ձեզի, այս անգը պիտի կարենայ վերագտնել յոյսը:
- ★ **ՅՈՒԼ** (21 Ապրիլին 21 Մայիս)
- Տարուած էք մտածումով մը, որ կատարելապէս փոխել պիտի տայ ձեր միտքը աւելի լաւ տեղ մը երթալու: Ձեր նոր ընկերքին մասին յաւելալ ծանօթութիւններ քաղեցէք:
- ★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսին 21 Յունիս)
- Սէր, բարեկամութիւն, աշխատանք. այս բոլոր մարգերը նպաստաւոր պիտի ըլլան ձեզի համար, եթէ արտասահման երթալու նպատակ մը ունիք: Օրը լեցուն պիտի ըլլայ անակնկալներով:
- ★ **ԽՆՑԳԵՏԻՆ** (22 Յունիսին 23 Յուլիս)
- Ձեր ճամբուն քառուղիին կը գտնուիք տակաւին ու չէք որոշած ձեր ուղղութիւնը, բայց միաժամանակ կ'ուզէք ամէն բան նոյն ատեն ընել, ինչ որ քիչ մը դժուար է: Չափաւոր եղէք:
- ★ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսին 23 Օգոստոս)
- Ձեր կիներ կամ ձեր ամուսինը իրաւունք չունի ձեր դիմաց սխալ մը գործելու: Ան պրկուած վիճակ մը ունի, ուրեմն գիտցէք աւելի փափկանկատ ըլլալ անոր հետ:
- ★ **ԿՈՅ** (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)
- Այսօր քիչ մը անհանգիստ պիտի զգաք, ձեր շուրջինները պիտի մտահոգուին ձեզ մով: Լաւ է, որ բժիշկի մը հանդիպիք: Բայց անցողակի հարց մըն է եղածը:
- ★ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)
- Թատերական կամ այլ ձեռնարկի մը երթալու մասին կը մտածէք ձեր բարեկամներով: Լաւ է, մտածում մը, գոհ պիտի մնաք բոլորդ ալ: Այսպիսի հանդիպումներ կը ներշնչեն:
- ★ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)
- Երբ կը մտածէք անցած օրերու հին սիրոյ մը մասին, կը արտոյթ: Աւելորդ է այդպիսի մտածումներ ունենալ, որոնք ոչինչ պիտի փոխեն ձեր կեանքէն:
- ★ **ԱՂԵՂՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)
- Աշխատանքի մարզին մէջ պիտի կատարէք կարեւոր իրագործում մը համաձայնագիր մը կնքելու կամ այլ ծրագիր մը աւարտելու: Պիտի արժանանաք գնահատանքի:
- ★ **ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերին 20 Յունուար)
- Գրամական փոխանութիւն մը մի՞ ստորագրէք նախքան այդ մասին լաւ մտածելը. լաւ քննեցէք ձեր պիւստեան եւ տեսէք, թէ կարելիութիւն ունի՞ք նման փոխատուութեան:
- ★ **ՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարին 19 Փետրուար)
- Բարեկամութիւն մը վայելելու աղուոր առիթ մը պիտի ստեղծուի, ձեր կարգին պատեհութիւնը պիտի ունենաք օգտակար ըլլալու ձեր մէկ հարազատին: Օրը բարեբեր է:
- ★ **ՁՈՒԿ** (20 Փետրուարին 20 Մարտ)
- Մէկը խորամանկութեամբ պիտի փորձէ գաղտնիք մը կորզել ձեզմէ, բայց դուք ծուղակին մէջ պիտի չիյնաք: Լաւ դիտեցէք ձեր շրջապատը եւ ըստ այնմ որոշում տուէք որեւէ հարցի պարագային:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԼՕՄԻ մահացած բոլոր հիմնադիրներու, բարերարներու եւ ընկերակիցներու հոգւոյն հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Ապրիլ 2003, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԼՕՄԻ ԾԻՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒ ՌԻՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթանցի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳԵՈՐԳ ՃԵՐԻՏԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Ապրիլ 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԺԻՐԱՅՐ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Ապրիլ 2003, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ

ԱՐԱ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Ապրիլ 2003, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀՐԱՅՐ ԳԱՍԱՊԵԱՆԻ մահուան Բ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Ապրիլ 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ

ԸՆԾԱՅ ԲԱԳԱՐԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Ապրիլ 2003, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ (Սէյրաֆի), յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՆԻ ԹԻԻ 5423 Պատրաստեց՝ Ս.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|---|--|
| 1. Դատարարի գլխանոց - Գառնսիրուկ: | 1. Թափփփած - Դարձեալ, վերստին: |
| 2. Անտեսուած - Լիպիոյ վերջին թագաւորը: | 2. Վարի թռչուն - Տակաւին, մինչեւ հիմա: |
| 3. Արեւելեան իջեւան - Համազոյ: | 3. Աստուածային - Կեղտ: |
| 4. Որմնադիրի ուղղաձիգ լար - Աչք (հակ.): | 4. Եղբոր (հակ.) - Արգելական - Վայրի արու ոչխար: |
| 5. Արամբի - Չիւն բարձրացնող քամի: | 5. Դափնեվարդ - Կարծր շինանիւթ: |
| 6. Արեւելեան - Յովհաննէս Թուրանեանի ծննդավայրը - Կէս՝ սուղ: | 6. Բոսոր - Լեռնալիրանանի Պապատա գաւառի գիւղերէն: |
| 7. Փրկագործ - Մերկոստերոյ: | 7. Կարմիր մագերթ - Խօսք: |
| 8. Նմանաձայն տառեր - Լանջ: | 8. Իշխող - Բռնի ու ձրի աշխատանք: |
| 9. Շիրվանզադէի երկերէն (երկու բան): | 9. Իրերայջորդ գիրեր - Բուրայ: |
| 10. Գիրուց - Տարուան եղանակներէն - Արական օտար անուն: | 10. Կրկնուած ձայնաւորներ - Մեծ եկեղեցի: |
| 11. Բազորն - Ուր: | 11. Մետաղեայ առած - Գական կազմած - Ուրուր: |


ԹԻԻ 5422

ԽԱՉԲԱՆԻ

ԼՈՒԹՈՒՄԸ


1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ս	Յ	Պ	Ղ	Ի	Ն	Լ	Ա	Փ	
2	Ա	Ր	Ե	Ս	Լ	Ե	Կ	Ս	Ս	
3	Ր	Ե	Պ	Ղ	Ի	Ն	Լ	Ա	Փ	
4	Ա	Ր	Ե	Ս	Լ	Ե	Կ	Ս	Ս	
5	Տ	ՈՐ	Ե	Ս	Լ	Ա	Փ	Ք	Ք	
6	Ա	Ր	Ե	Ս	Լ	Ա	Փ	Ք	Ք	
7	Կ	Ա	Մ	Ն	Ե	Լ	Ն	Ի	Չ	
8	Կ	Ի	Ր	Ի	Լ	Ն	Չ	Ք	Ք	
9	Ն	Ե	Ս	Լ	Ա	Փ	Ք	Ք	Ք	
10	Շ	Ա	Ր	Ե	Ս	Լ	Ա	Փ	Ք	
11	Ե	Լ	Ն	Ե	Կ	Ս	Ս	Ս	Ս	

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



ՃԱՏՐԱԿ. ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՀՐԱԿ ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ
ՅԱԿՈՔ ԹՈՍՈՒՆԵԱՆ
ԱՆՈՅՆԱՆՆԵՐ.
ՄԵՂՐԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
ՓՈԽ ԱՆՈՅՆԱՆ,
ԻՍԿ ՄԱՐԻԱ ԹՈՍՈՒՆԵԱՆ ՅՐԳ**



Չախէն աջ՝ Յակոբ Թոսունեան, Հրակ Փափազեան, Մեղրի Կիրակոսեան եւ Մարիա Թոսունեան



Արցաշարքին իրենց մասնակցութիւնը բերած հայ պատանիները

Լիբանանեան ճատրակի մրցաշարքերու ընթացքին փայլուն արդիւնքներ քաղած Հ. Մ. Ը. Մ. ի կրտսեր ներկայացուցիչները, վերջին շաբաթներուն, դարձեալ գրաւեցին լիբանանեան ճատրակի պատանիանատուներուն եւ մամլոյ ներկայացուցիչներուն ուշադրութիւնը, երբ իրենց մղած մրցումները մեծաւ մասամբ արտօնեցին յաղթանակներով:

Անցեալ երկու շաբաթավերջերուն՝ 12, 13, 18 եւ 19 Ապրիլին տեղի ունեցած Լիբանանի ճատրակի տարիքային ախոյեանութեան մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. այս տարի եւս փաստեց իր ներկայութիւնը՝ փինք ներկայացնող տասներկու մարտիկ-մարտիկուհիներով, որոնք անցնող ամիսներուն փորձերու կը հետեւեին մարտիկներ խաչիկ եւ Սիւլան Մուրատեաններու (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) եւ Գեորգ Կոստանեանի (Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ) հետ:

Հակառակ այն իրողութեան, որ Հ. Մ. Ը. Մ. ակաւ վարպետներէն ոմանք առաջին անգամ ըլլալով իրենց մասնակցութիւնը կը բերեին ախոյեանութեան մրցումներուն, անոնք արձանագրեցին փայլուն արդիւնքներ:

Այսպէս, 12 տարեկանէն վար տղոց մրցումներուն Հրակ Փափազեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) հանդիսացաւ Լիբանանի ախոյեան, արտակազմին 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Լիբանանի կրտսեր ամէնէն փայլուն վարպետներէն Էլի Ապի Ռաստր: Միեւնոյն դասակարգին մէջ Հրակ Պետոյեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) ապահովեց 4 կէտ եւ երեք ուրիշներու հետ բաժնեկցեցաւ 3-5րդ տեղերը:

Իր կարգին, Մեղրի Կիրակոսեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) առաջին մրցումին Լիբանանի 2002ի ախոյեանը ջախջախիչ պարտութեան մատնելէ ետք, շարունակեց յաւաքարկութեամբ եւ մինչեւ 12 տարեկան աղջկանց ախոյեանութիւնը արտօնեց երկրորդ դիրքին վրայ:

14 տարեկանէն վար աղջիկներու դասակարգին մէջ Ռաստր Թոսունեան (Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ) տիրացաւ երրորդութեան մետալին:

16 տարեկանէն վար դասակարգի մրցումներուն Յակոբ Թոսունեան (Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ) ապահովեց ախոյեանի տիտղոսը, պարտութեան մատնելով բազմիցս Լիբանանի կրտսերներու ախոյեան Շէմիլին:

Քաջալերական էին նաեւ Արամ Կիրակոսեանի, Արամ եւ Արիկ Արաքեանեաններու, Ժիրայր, Ռաֆիկ եւ Գօգօ Օգնայեան եղբայրներու արդիւնքները: Անոնք բոլորն ալ իրենց տեղերը ապահովեցին ընդհանուր դասաւորման առաջին տասնեակին մէջ:

«ՉԵՍՓԻՆՆԵՐ ԼԻԿ»

ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԸՑ ԴՈՒՐՍ ՄԱՅ

«Չէմփիրնիկ Լիկ»ի քառորդ արտակազմի դարձի մրցումներուն, երէկ գիշեր թէյէ Մանչեսթըր Եունայթեթըտ իր դաշտին՝ «Օլտ Թրէֆորտ»ի մէջ 4-3 արդիւնքով յաղթեց Ռէյլ Մատրիտի, սակայն դուրս մնաց մրցաշարքէն, նկատի ունենալով որ երթին, «Սանթիակո Պէննակտ»ի մէջ 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրած էր:

Սպանական կազմին աստղը հանդիսացաւ պրայվիցի Ռոնալու, որ հէթրիք մը իրագործեց (12րդ, 50րդ եւ

58րդ): Մանչեսթըր Եունայթեթըտի կողերը նշանակեցին՝ Ռուտ Վան Նիսթըլլոյ (43րդ), Իվան Հելկուէրա (52րդ) սխալմամբ իր բերդէն ներս) եւ Տէյվիտ Պեթրամ (71րդ եւ 85րդ):

Կիսարտական հանգրուանի մրցումները պիտի ըլլան քառորդ արտակազմի մրցումներէն շատ արեւի հետաքրքրական, նկատի ունենալով, որ առաջինին՝ Ռէյլ Մատրիտ պիտի ճակատի Եովեներուի դէմ, իսկ երրորդին՝ Ինթեր Միլան՝ Ա. Սէ.

Միլանի դէմ:

Երթին, Այաքս Ամրաթերտամի հետ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած Ա. Սէ. Միլան հանդիսացաւ իտալական երրորդ խումբը, որ ապահովեց կիսարտական մրցումին իր տուսը, «Սան Սիբո»ի մէջ 3-2 արդիւնքով պարտութեան մատնելով հոլանտական կազմը, Ինցալի (30րդ), Շեյլզենքօ (65րդ) եւ Թոմասըն (89րդ) նշանակեցին Ա. Սէ. Միլանի կողերը, իսկ Լիթմանըն (63րդ) եւ Փիենար (78րդ) Այաքսի կողերը:

ԱՅՍՕՐ՝ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆ ԴԱՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Եու. Է. Էֆ. Ա. Ի բաժակի մրցաշարքին կիսարտական հանգրուանի դարձի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան այսօր, Լացիո Ռոմա բաւական դժուար առաքելութիւն մը ունի, երբ հիւրընկալէ Փորթոն, նկատի ունենալով որ անկա երթին Փորթուգալի մէջ 4-1 արդիւնքով ծանր պարտութիւն մը կրեց:

Երկու շաբաթ առաջ, իր կազմին կրած այդ պարտութենէն ետք, Լացիոյի մարտիկ Ռոպերթո Մանչինի իր համակիրներուն պատուիրեց, ըսելով, որ փոխանակ խումբը քննարարուելու դարձի մրցումին դաշտ ներկայանալով, իրենց մարտիկները քաջալերեն մրցաշարքէն դուրս ձգելու համար Փորթոն:

Իտալական կազմին պատասխանատուները յայտնեցին, թէ այսօրն ան այս մրցումին, 16 տարեկանէն վար եղող աղջիկներն ու պտիկները միայն մէկ էրօ

վճարելով կրնան ներկայ գտնուիլ մրցումին: Նշենք, թէ ցարդ այս հետաքրքրական առաջարկէն օգտուած են շատեր, որովհետեւ քառասուն հարկար տոմսակարգէն իսկ սպառած է:

Իտալական կազմին պիտի բացակային բերդապահ Մեմօ Փերուցի եւ Եափ Սթեմ (վիրաւոր): Փորթուգալական այլ կազմ մը՝ Պոալիսթա իր կարգին յոյս ունի արտակազմին մրցումին իր տուսը ապահովելու համար, որովհետեւ անկա կը յուսայ Սելթիքի դէմ եւ իր դաշտին վրայ անպայման յաւարդիւնք արձանագրել, այնպէս ինչպէս յաջողեցաւ արձանագրել այս վերջինին դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին (1-1):



Եափ Սթեմ

Մրցումին նախօրեակին, Սելթիքի մարտիկ Մարթին Օնիլ յոյսով է, որ իր կազմը կրնայ ապահովել արտակազմին մրցումին իր տուսը, մանաւանդ որ Քրիս Մարթին (նախապէս վիրաւոր) վերադարձած է:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶ ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԵՑ ՎՈՒՂ ՎՉԷՆ

Էն. Պի. Էլի փլեյթօֆի երէկուան մրցումներուն, Միներսփոլիսի մէջ, Միներսփոլիս Կուլվկ 119-91 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց երեք անգամ ախոյեան հանդիսացած Լոս Անճելըս Լէյքըրը, որ նոյն դաշտին վրայ տեղի ունեցած առաջին ճակատումին 117-98 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած էր:

Վստահաբար, որ Լէյքըրը առայժմ գոհ կը թուի ըլլալ 1-1 արդիւնքին, նկատի ունենալով որ երրորդ ճակատումները տեղի ունենան Լոս Անճելըսի մէջ:

Լէյքըրը կոյզը՝ Քոպէ Պրայնթը եւ Շաքիլ Օնիլ, որոնք առաջին մրցումին միասնաբար նշանակեցին 71 կէտ, երէկուան մրցումին 27ական կէտ, ինչ որ վստահաբար բաւարար չէր, որ անոնց կազմը յաղթանակ մը արձանագրէ:

Վուլվիկ յաղթանակը կերտողները հանդիսացան Թրոյ Հատսըն եւ Քեւին Կառնէթ. առաջինը նշանակեց 37 կէտ եւ 10 էսիւթ, իսկ երկրորդը՝ 35 կէտ եւ 20 ռիպասուն:

Երէկուան երկրորդ մրցումին, որ տեղի ունեցաւ Նիւ ձըրպիլի մէջ, Միլուոքի Պաքս 88-85 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք դաշտին տեղի ունեցան Մեթըր, յաջողեցաւ արդիւնքը հաւասարեցնել (1-1): Նէթթի մարտիկներէն Կերի Փէյթըն նշանակեց 22 կէտ, իսկ անոր խմբակցի եւ Օլ-Սթարի մարտիկներէն Ճէյսըն Քիտ՝ 17 կէտ, 8 էսիւթ եւ 7 ռիպասուն:

Նշենք, թէ յաջորդ երկու մրցումները տեղի պիտի ունենան Միլուոքի մէջ: Ստորեւ՝ այսօրուան եւ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ
Տիթթոյի Փիսթըն - Օրլանտո Մէճիք
Տիլատեյֆիա Միքսըր - Նիւ Օրլինս
Տիլատեյֆիա Միքսըր - Փորթլէնտ Թրէյլ Պէյլըրը
ՎԱՂԸ
Միլուոքի Պաքս - Նիւ ձըրպիլ Նէթթ
Պոսթըն Սելթիքս - Ինտիանա Փէյթըրը
Լոս Անճելըս Լէյքըրը - Միներսփոլիս Կուլվկ
ՇԱՐՔԸ
Օրլանտո Մէճիք - Տիթթոյի Փիսթըն
Տեօնիքս Սանկ - Սան Անթոնիո Սփըրը
Փորթլէնտ Թրէյլ Պէյլըրը - Տիլատեյֆիա Միքսըր



Թրոյ Հատսըն

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՒՆ

ՆԸԺՄԵ – ԱՆԱ ԱԼԷՅ՝ 2-2

Լիբանանի ֆուտպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան 17րդ հանգրուանի մնացեալ երեք ճակատումներուն, որոնք տեղի ունեցան երէկ, 3րդ դիրքը գրաւող Նըժմէ արձանագրեց եղանակի իր 4րդ հաւասարութիւնը, երբ 2-2 արդիւնքով բաժնուեցաւ Ախա Ալիի Ալէյէն:

Անսար եւ Թատամոն Սուր յաջողեցան յաղթանակներ արձանագրել, յաջորդաբար պարտութեան մատնելով Մապարրան (2-1) եւ Սալամը (2-1):

Շաբաթավերջին տեղի կ'ունենան 18րդ հանգրուանի մրցումները, որոնց մէջ ամէնէն ուշագրաւը վստահաբար, որ պիտի ըլլայ Անսար – Նըժմէ ճակատումը:

Ստորեւ՝ 18րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ՇԱՐՔԸ, 26 ԱՊՐԻԼ	ԺՄՄ	ՂԱՇՏ
Սաժէս – Ահո	4:30ԻԳ	Պէյրութ
Անսար – Նըժմէ	8:30ԻԳ	Մ. Անան
ԿԻՐԱԿԻ, 27 ԱՊՐԻԼ		
Պըրժ – Շապալ Սահէլ	4:30ԻԳ	Մ. Անան
Թատամոն Սուր – Օլիմփիք	4:30ԻԳ	Սուր
Սաֆա – Սալամ	4:30ԻԳ	Սաֆա
Մապարրան – Ախա Ալէյ	4:30ԻԳ	Պէյրութ

Ստորեւ՝ դասաւորումը.

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԷՏ
1.- Ահո	12	3	2	32	14	39
2.- Օլիմփիք	12	2	3	33	9	38
3.- Նըժմէ	10	4	3	28	15	34
4.- Անսար	8	7	2	29	16	31
5.- Թ. Սուր	7	7	3	24	18	28
6.- Սաժէս	5	6	6	22	22	21
7.- Սաֆա	5	5	7	17	21	20
8.- Սահէլ	2	7	8	18	29	13
9.- Ախա	3	4	9	11	26	13
10.- Մապարրան	2	6	9	15	30	12
11.- Սալամ	2	5	10	20	33	11
12.- Պըրժ	5	2	10	13	29	11

ՓԻՆԿ ՓՈՆԿ

Հ. Մ. Ը. Մ. ԿՐԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցող Լիբանանի փինկ փոնկի տղոց խմբային ախոյեանութեան մրցաշարքին իր մասնակցութիւնը բերող Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ երէկ թէյէ արձանագրեց իր հինգերորդ յաղթանակը, 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով Քէֆարմանը, սակայն Հ. Մ. Ը. Մ. ի տղաքը կրեցին մրցաշարքի իրենց առաջին պարտութիւնը՝ Անդրանիկէն, 3-0 արդիւնքով:

Յառաջիկայ Մայիս 1ին, Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ ժամը 5:30ին կը ճակատի Պատուրիէի դէմ, իսկ ժամը 7:00ին՝ Ատապ Ուայ Ռիատայի դէմ:

Նշենք, թէ շաբաթավերջին կը սկսին նաեւ աղջրկանց ախոյեանութեան մրցումները, դարձեալ նոյն վայրին մէջ՝ Մոն Լա Սալ:

ԹԵՆԻՍ

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ՊԱՐՏԵԼՈՆԱՅԻ ՄՐՑԱԾԱՐԲԷՆ

Պարսելոնայի մէջ (Մոնակոյի) փրէնչի ունեցող թենիսի փրոց միջազգային մրցաշարքին իր մասնակցութիւնը բերող արժանթիւնաւոր Դաւիթ Նալպանտեան (դասուած՝ 6րդ), 2րդ հանգրուանին իր կարարած մրցումին 6-3 եւ 7-6 արդիւնքով դարպարութիւն մը կրելէ ետք ռուս Նիկոլայ Տալպուքովէն, դուրս մնաց մրցաշարքէն:

Բ. հանգրուանին դարպարութիւն կրողներուն շարքին էլին նաեւ արժանթիւնցիներ Ֆրանքօ Սքուիլարի եւ Կիլերմօ Քորիա:

ՔԱԹՕ ՄԱՀԱՅԱՒ



Տալթիո Զաթօ

Մն ամուսնացած էր եւ ունէր մանչ մը (երկու փարեկան) եւ աղբիկ մը (երեք ամսուան):

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ Կ'ԸՆԴՈՒՆԻ, ԹԵ ԻՐԱՔԻ ՄԵՋ ԸԱԿԱԱՄԵՐԻԿԵԱՆ «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ» ՑՈՅՑԵՐ ԿԸ ԾԱԻԱԼԻՆ

ԱՐԱՖԱՔ ԵՒ ԱՊՊԱՍ «ՀԱՐԹԱԾ ԵՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ՀԱՐՑԵՐԸ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաթ Մարաբաթ երէկ արտօնութիւն տուաւ նշանակալի վարչապետ Մահմուտ Ապպասի, որ Մոհամէտ Տահաւը իր նոր կառավարութեան մէջ ներքին ապահովութեան պատասխանատու նշանակելէ վերջ տալով ստեղծուած անել կացութեան:



Տահլան

Նախագահին քարտուղարը՝ Թայէպ Ապտէլ-րահիմ, յայտարարած է, թէ Տահլան պիտի դառնայ պետական նախարար՝ պատասխանատու ապահովութեան հարցերու, աւելցնելով, որ Ապպաս ինք պիտի ստանձնէ ներքին գործոց նախարարութեան պաշտօնը, ինչ որ մեծ յաջողութեամբ բարեկարգչական վարչապետին համար եւ ծանր հարուած մը՝ Արաֆաթի, որ մերժած էր այս տարապը:

Համաձայնութիւնը նաեւ ճամբան կը հարթէր Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Գուշի՝ յառաջիկայ շաբաթ իրապարակելու խաղաղութեան միջազգային «ուղեգր»ը, որ կը ճշդէ պաղեստինեան պետականութեան հաստատման եւ իրաւիքներու պաշտպանման 30 ամսուան տազնապին ի խնդիր առնուելիք քայլերը:

Արաֆաթի բարձրաստիճան խորհրդական Նապիլ Ապու Ռուտէյնա «ուղեգր»ին «անմիջական» իրապարակումին կոչ ուղղած է, ինչպէս նաեւ միջազգային համայնքին կոչ ուղղած, որ մղէ Իսրայէլը՝ քաջուելու պաղեստինեան հողամասերէն:

Մինչ այդ, Ապտէլրահիմ յայտնած է, որ Արաֆաթ խորհրդարանի նախագահ Ահմէտ Քորէյէն պահանջած է պաղեստինեան օրէնսդիր խորհուրդի նիստ մը կազմակերպել յառաջիկայ շաբաթ՝ նոր կառավարութեան կազմին գծով վստահութեան քուէի օրակարգով:

Համաձայնութեան մէկ ղեկավարը երէկ պոզուցուցած է կառավարութիւնը պիտեալ պայքար մղող պաղեստինցիներու դէմ «պատերազմ մղել»:

Ե. Միութեան արտաքին հարցերու պատասխանատու Նապիլ Սոլայման երէկ ողջունած է պաղեստինեան կառավարութեան գծով գոյացած համաձայնութիւնը:

Անոր բանքերը ըսած է, որ համաձայնութիւնը պաղեստինեան իշխանութեան մէջ բարեկարգումներու ընթացքը եւ Իսրայէլի հետ խաղաղութեան գործընթացը պիտի բարձրադնէ:

Իսկ Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ երէկ ըսած է, թէ Իրաքի մէջ կացութիւնը պէտք չէ ուշադրութիւններ շնչել իսրայէլեակապաղեստինեան տազնապին լուծման ճիգերէն, կոչ ուղղելով, որ խաղաղութեան «ուղեգր»ը արագօրէն իրապարակուի:

● ՄԱՐՍԱԿԵՐՊՈՒԱԾ ըստերը երէկ Կապալի մէջ քանդած են Արաֆաթի պարագաներէն՝ բարձրաստիճան ռաիկանի մը եւ ապահովութեան այլ պատասխանատուի մը տունները:

(ԱՖՓ)

Հարիր հապարար 24 ինչեր երէկ յաջորդաբար երկրորդ օրն ըլլալով ուղղութեան Իրաքի ամէնէն սուր բաղաձայնութեան մը համար, որ արգիլուած էր Սատտամ Հիւսէյնի օրերուն:

Հանդիսութեանց երկրորդ եւ վերջին օրուան ընթացքին, հակամարտութեան բողոքի ցոյցերուն տարողութիւնը մեծ չեղաւ, հակառակ կրօնականներու կոչերուն, որ յայնաժիր տարողութեամբ ցոյցերով պահանջուի Մ. Նահանգներու գլխաւորութեամբ «գրաւում»ին աւարտը:

Իրաքի ամերիկացի քաղաքային կառավարիչ՝ հանգստեան կոչուած Վորապար ճէյ Կարնըր խոստովանած է, թէ Ուաշինկթըն «կազմակերպուած որոշ ցոյցեր» կը դիմագրաւէ իր ղեկավարութեան դէմ, սակայն շեշտած է, որ իրաքցիներու մեծամասնութիւնը «ուրախ է, որ մենք ինչ ենք»:

Կարնըր շարունակած է երկրին մէջ իր շրջապտոյտը՝ Իրաքի վերակառուցման կարիքներուն գնահատումը կատարելու համար:

Մինչ այդ, հարաւային Ում Բասըր քաղաքին մէջ, Բրիտանիոյ պաշտպանութեան նախարար Ճէֆ Հուն յայտնած է, թէ իր կարծիքով Սատտամ Հիւսէյն տակաւին ողջ է եւ Իրաք կը գտնուի:

Քարապայայի մէջ ուխտագնացութեան կազմակերպիչները յայտնած են, թէ միլիոնաւոր մարդիկ կ'ակնկալէին, սակայն ակնատեսներու համաձայն, անոնց թիւը մէկ միլիոնը չէ անցած:

Ամերիկեան ուժերը քաղաքէն որոշ հեռաւորութեան մնացած են, մինչ կը լսուէին «ո՛չ Ամերիկայի եւ Սատտամի, այլ՝ իսլամութեան», բացազանչութիւններ, շարագունով մը, որ

աւելի եւս թափ պիտի տար ամերիկեան գլխաւորութեամբ ուժերուն եւ շիի համայնքին միջեւ լարուածութեան, բարձրաստիճան կղերական շէյխ Մոհամէտ Ֆարթուպի յայտնած է, թէ ամերիկեան ուժերը պիտի խոչընդոտեն:

Անոր հետեւորդները ըսած են, թէ ան Կիրակի օր 5 այլ շիիներու հետ ձերբակալուած է, սակայն ամերիկացի պաշտօնատարներ չեն կրցած հաստատել այս տեղեկութիւնը:

Մինչ այդ, Իրան հաստատուած իրաքեան ընդդիմադիր խմբակ մը երէկ յայտնած է, թէ Իրաք կարիքը չունի ճէյ Կարնըրի գլխաւորութեամբ ամերիկեան քաղաքային վարչակարգի մը եւ թէ իշխանութիւնը պէտք է յանձնուի իրաքցի ժողովուրդին:

Իրաքի Իսլամական Յեղափոխութեան Գերագոյն Ժողովին փոխ ղեկավարը՝ Ապտիւլ Ալիյ Հաքիմ յայտնած է, թէ Քարապայայի ուխտագնացութիւնը «փաստած է, որ իրաքցիք իրենց հարցերը կրնան տնօրինել», նկատի ունենալով, որ անիկա խաղաղօրէն ընթացած է:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԵ ԻՐԱՔԻ ՄԵՋ ԸԱԿԱԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԸ

Միւս կողմէ, Մ. Նահանգներ խստիւ պոզուցուցած են երէկ Իրանը, թէ Իրաքի մէջ «արտաքին որեւէ միջամտութիւն» պիտի չհանդուրժեն, մտավախութիւններու ծիրէն ներս, թէ Թեհրան գործակալներ զրկած է իր բնոյթով իսլամական կառավարութեան մը հաստատման ճիգեր ի գործ դնելու համար:

«Նիւ Եորք Թայմս» մէջ ըրբեքով ամերիկացի



պաշտօնատարներ, հաղորդած է, թէ Իրանցի մարզուած գործակալներ հարաւային Իրաք կ'անցնին՝ քաջալերելու համար իրանեան «մոտէլ»ով իսլամական կառավարութեան մը հաստատումը:

Իսկ իրանեան ընդդիմադիր ժողովուրդին Մուճախիտի պիտեալներու մէկ բարբերը երէկ յայտնած է, որ ամերիկեան ուժերուն հետ գոյացած պինդույնը Իրաք հաստատուած խմբակին առիթ տուած է, որ իր պէնքերը պահէ, իրանեան կառավարութեան դէմ պայքարը շարունակելով:

Մինչ այդ, Յորդանանի Ապտալա Բ. թագաւորը երէկ Իրանի նախագահին մէկ պատուիրակին յայտնած է, թէ շրջանային երկիրները պէտք է օրապէս կանգնին իրաքցի ժողովուրդին, որպէսզի ապագան կերթնէ եւ միասնականութիւնը պահպանէ:

Պատուիրակը՝ Սեյիտ Մոհամէտ Սատր, թագաւորին պատգամ մը յանձնած է նախագահ

Մոհամէտ Սաթեմիէն՝ երկու երկիրներուն միջեւ կապերուն թափ տալու հարցին առնչութեամբ:

ՖՐԱՆՍԱ - Մ. ՆԱԿԱՆԳՆԵՐ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԹԱՓ ԿԸ ՍՏԱՆԱՅ

Միւս կողմէ, Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը քննադատած է Ֆրանսան, որ գլխաւորած էր պատերազմին ընդդիմութիւնը, պոզուցնելով, թէ անիկա այժմ հետեւանքները պիտի կրէ:

Հարցապրոցի մը ընթացքին, հարցումի մը՝ թէ արդեօք Ֆրանսա պիտի պատժուի՞ հակապատերազմի կեցուածքին համար, Փաուլը «այո» պատասխանած է:

«Պէտք է վերանեստութեան ենթարկենք Ֆրանսայի հետ մեր յարաբերութիւնները՝ այս հարցին լոյսին տակ», ըսած է ան:

Աղբիւրներ յայտնած են, թէ նախագահ Ճորձ Գուշի բարձրաստիճան

խորհրդականներ նկատուին խիստ միջոցառումներ, որոնց կարգին՝ ՕԹԱՆԻ մէջ Փարիզը լուսանցքի մէջ ձգել էր սահմանափակել անոր մասնակցութիւնը անդրատլանտեան բեմերու վրայ:

Սակայն Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմինիք Տրվիփէն Թուրքիա այցելութեան մը աւարտին հակադարձած է ամերիկեան արտաքաղաքականութեան:

«Ֆրանսա եւ միջազգային համայնքին մեծամասնութիւնը Իրաքի տազնապին ընթացքին վարուեցան համաձայն իրենց համոզումներուն եւ միջազգային օրէնքը պաշտպանելու սկզբունքով», ըսած է ան:

«Ֆրանսա պիտի շարունակէ միեւնոյն ընթացքով», շեշտած է նախարարը:

Ամերիկեան սպանալիքը տեղի կ'ունենար հակառակ անոր որ Ֆրանսա իրաժարած էր պնդել, որ ՄԱԿ պէտք է հաստատէ, թէ Իրաք ձերբակալուած է պէնքերու արգիլեալ ծրագիրներէ, նախ քան Սատտամի օրերուն հաստատած պատժամիջոցներու փոփոխութեան դիմելը:

Փարիզ պատրաստակամութիւն յայտնած է, ընդունելու անմիջապէս առկախում մը, այն հասկացողութեամբ, որ պատժամիջոցները մնայուն կերպով ջնջուին կախեալ է ՄԱԿի պէնքերու քննիչներէն:

Սպիտակ Տունը երէկ հակադարձելով Ֆրանսայի առաջարկին, յայտնած է, թէ պատժամիջոցները պէտք է ջնջուին եւ «ո՛չ պարզապէս առկախուին»:

«Վարչակարգին տակաւին, Ուաշինկթընի կեցուածքը այն է, թէ տնտեսական պատժամիջոցները այլեւս անիրաժեշտ չեն», ըսած է անոր բանքերը՝ Արի Յոյսըրը:

(ԱՖՓ)

ՍՈՒՐՈՅ ԳԾՈՎ ԻՎԱՆՈՎ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԵ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԸ՝ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԵԼԷ

ՄՈՍԿՈՒՍ, 23 (ԱՖՓ). - Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իվոն Իվանով 24 ընթացքի օր Միացեալ Նահանգները պոզուցուցած է «սպառնալիքներու քաղաքականութիւն մը» վարելէ, կոչ ուղղելով, որ դիւանագիտական միջոցներու դիմեն՝ Սուրիոյ վրայ ճնշում բանեցնելու համար:



Իվանով եւ Պէլաաոտեմ

«Սպառնալիքներու քաղաքականութիւն մը՝ առանց շոշափելի տունայնքներ կայացնելու, կրնայ շրջանին մէջ արդէն իսկ բարդ կացութիւնը աւելի ծանրաւ կը շարունակուի», ըսած է Իվանով, այլձերիացի իր պաշտօնակիցին՝ Ապտէլայիյ Պէլաաոտեմի հետ միացեալ մամլոյ ստույխի մը ընթացքին:

«Սուրիա եւ Մ. Նահանգներ դիւանագիտական յարաբերութիւններ ունին. որեւէ մտավախութիւն պէտք է այդ յարաբերութեանց ճամբով լուծուի», շեշտած է Իվանովը:

ՍԱՐՍԸ ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄՐՏԱՀՐԱՒԵՐ ՄԵՆ Ե

Կ'ԸՍԵ ՄԱԿԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

ՍԱՐՍ պատճառող ժաիրին տարածումը «ամէնուն համար մարտահրաւէր մըն է», յայտնած է ՄԱԿի Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութեան ընդհանուր տնօրէն Կրօ Հարլէմ Պրուսթլանթ, երէկ, ընդգծելով դարմանումի կամ պատուաստի մը չգոյութիւնը:

Ան դիտել տուած է, թէ բոլոր երկիրները պէտք է պատրաստուին եւ թէ անհրաժեշտ է հանրային առողջապահութեան միջոցառումները լաւ ձեւով կիրարկել՝ տարածումը սահմանափակելու համար:

Կազմակերպութիւնը երէկ պոզուցուցած է ճամբորդները Պէյճիկէն եւ Թորոնթոյն հեռու մնալու, մինչ աշխարհի տարածքին կառավարութիւնները կը փորձէին սանձել մահացու ժաիրին տարածումը:

Ըստ կազմակերպութեան, ցարդ աշխարհի տարածքին ՍԱՐՍը 251 պոհ իված է, սակայն նոր մահերու եւ վարակումներու յայտարարութիւններ օրական հերթականութեամբ տեղի կ'ունենան:

ՄԱԿի գործակալութիւնը նախապէս արդէն թելադրած էր Հունկ Բոնկի եւ հարաւային Չինաստանի Կուանկտոնկ նահանգը չճամբորդել:

Նորագոյն պոզուցումները տեղի կ'ունենային, մինչ Հունկ Բոնկի, Չինաստանի եւ Սինկափուրի մէջ 16 նոր պոհեր եւ ՍԱՐՍի հարիւրաւոր նոր պարագաներ կը յայտարարուէին, իսկ տազնապին տնտեսական կորուստը հետպիտեւ աւելի «կ'աճէր»:

(ԱՖՓ)

Հայ Կաթողիկէ

Partner with LCCIEB BRITISH COUNCIL

ՄԵՍՐՈՊԵԱՆ Արուեստից Վարժարան

Ռուսանդներու թիւի ԱԾԸ

Բացում Գ. երկամսեակի Անգլերէն եւ Օտար Լեզուներ Համակարգիչ սկիզբը՝ 29 Ապրիլ, 2003

489 ՈՒՍԱՆՈՂ 14 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Համակարգիչի լրիւ դասընթացը՝ ամսական միայն 25 հազար լ.ո.

Իրաքանչիւր ուսանող կրնայ ունենալ անուանական email հասցէ www.mesrobian.com -ի վրայ

Պուրճ Համուտ, Արաքս փողոց, Հեռ. 260504

Համակարգչային Գիտ.

2րդ երկվմս.	33	3րդ երկվմս.	43
2րդ երկվմս.	87	3րդ երկվմս.	76
2րդ երկվմս.	181	3րդ երկվմս.	221
2րդ երկվմս.	96	3րդ երկվմս.	102

2001/2002 2002/2003